

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Քաղաքաշինական եւ տարածական պլանավորման ոլորտում ՀՀ  
համայնքներին տեխնիկական խորհրդատվության եւ  
օժանդակության տրամադրման մասնագիտական աջակցության

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՅԼ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 596-Ն ՈՐՈՇՈՒՄ.**

- 1) Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը (N 1 հավելվածի).
- 2) Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը (N 2 հավելվածի).
- 3) քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգը (N 3 հավելվածի).
- 4) Հայաստանի Հանրապետությունում ըստ ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) օբյեկտները և դրանց դասակարգումը (N 4 հավելվածի).
- 5) կառուցապատման թույլտվությունների ձևաթղթերը (N 5 հավելվածի).
- 6) ճարտարապետահատակագծային առաջադրանքը, շինարարության թույլտվությունները, ճարտարապետաշինարարական նախագծերը, շինարարության ավարտի ակտերը և շահագործման թույլտվությունները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգը (N 6 հավելվածի):



9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**1) Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը (N 1 հավելվածի)**

- I. Ընդհանուր դրույթներ
- II. Կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները
- III. Կառուցապատման գործընթացի իրականացման հիմնական պայմանները
- IV. Շինարարական օբյեկտների դասակարգումը
- V. Նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը)
- VI. Բնակելի, հասարակական, արտադրական օբյեկտների և դրանց համալիրների ճարտարապետաշինարարական նախագծերի մշակումը, համաձայնեցումը և հաստատումը. շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) թույլտվությունը
- VII. Ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը կամ ավարտված շինարարության շահագործման փաստագրումը)
- VIII. Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի ավարտական ակտի ու շահագործման թույլտվության ձևակերպման առանձնահատկությունները
  - Ավարտական ակտի ձեւակերպումը
  - Շահագործման թույլտվության տրամադրումը

## ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ

- **ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ** (հատակագծային սահմանափակումներ)  
**ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԵԱՐՏԱՐԱԴԵՏԱՅԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) - ՍԿԻՁԲ**
- ԵԱՐՏԱՐԱԴԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ
- ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
- **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՔԱՆԴՄԱՆ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ**
- ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՁԵԿՈՒՄ
- ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
- **ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ** (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ) - **ԱՎԱՐՏ**

## **Կատեգորիաներ**

Քաղաքաշինական գործունեության օբյեկտները, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են **հինգ** կատեգորիաների՝

**ա. ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝**

**բ. միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝**

**գ. միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝**

**դ. բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝**

**ե. բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝**

**I կատեգորիա.**

**II կատեգորիա.**

**III կատեգորիա.**

**IV կատեգորիա.**

**V կատեգորիա:**

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**Հայտում ներկայացվող տեղեկատվություն**

- կառուցապատվող հողամասի հատակագիծը՝ նախագծվող կամ փոփոխման ենթակա օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ
- կառույցի գործառնական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս հատակագիծը
- անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

**Իրավասու մարմին**

**3 օրյա  
ժամկետ**

**Մատակարարներին**

- ջրամատակարարում/ջրահեռացում
- Գազամատակարարում
- Էներգամատակարարում

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**Մատակարարների կողմից**  
**Տեխնիկական պայմանների տրամադրում իրավասու մարմնին**

II կատեգորիա

5 օրյա  
ժամկետ

III կատեգորիա

10 օրյա  
ժամկետ

IV կատեգորիա

15 օրյա  
ժամկետ

**Իրավասու մարմնի կողմից**  
**ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ (ՃՀԱ) ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ**

մատակարար կազմակերպություններից տեխնիկական պայմաններ ստանալու անհրաժեշտության դեպքում

II կատեգորիա

$5+5=10$   
օրյա  
ժամկետ

III կատեգորիա

$10+5=15$   
օրյա  
ժամկետ

IV կատեգորիա

$15+5=20$   
օրյա  
ժամկետ

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**


**Գործող ընթացակարգի քայլեր**

1. Կառուցապատողի դիմումի և փաստաթղթերի մուտքագրում իրավասու մարմին (ՏԻՄ)- թղթային/էլեկտրոնային (ոչ լրակազմ փաթեթը վերադարձվում է **3-օրյա ժամկետում՝ ժամկետ+ռեսուրս**)
2. ՏԻՄ-ի կողմից մատակարար կազմակերպություններից տեխնիկական պայմանների հայցում և ստացում **թղթային/էլեկտրոնային (փոստային առաքման ժամկետ՝ **3+5(10,15)-օրյա**)**
3. ՏԻՄ-ի կողմից հատակագծային սահմանափակումների համալիրի (Նախագծի մշակման պարտադիր պայմանները, պահանջներն ու սահմանափակումները՝ հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի պահանջները՝ առկայության դեպքում: Բացակայության դեպքում նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջները) և մատակարարներից ստացված տեխնիկական պայմանների տրամադրում **թղթային/էլեկտրոնային (**3+5(10,15)**)+2 օրյա=10-20 օր**
4. Կառուցապատողի դիմումի հայտի և նախագծային հաստատված փաթեթի մուտքագրում իրավասու մարմին (ՏԻՄ)- **թղթային/էլեկտրոնային **1-3-օրյա****
5. ՏԻՄ-ի կողմից **5+3 (5,10,15)-օրյա**
  - ▶ փաթեթի լրակազմության ստուգում,
  - ▶ նախագծի համաձայնեցում (մատակարարների հետ)
  - ▶ թույլտվության տրամադրում (ամփոփում)-**1-3 օր**  
**թղթային/էլեկտրոնային**


**\*-ռիսկայնության այլ կարգի օբյեկտների դեպքում ավելանում են քայլեր և ժամկետներ**

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**  
**II կատեգորիայի օբյեկտների /միջին**  
**ռիսկայնության աստիճանի օբյեկտներ/**



**ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**  
**III և IV կատեգորիայի օբյեկտների**



9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**Նպատակը՝** ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին Նախագծի համապատասխանության ապահովումը:

**Փորձաքննություն չի պահանջվում՝**

I կատեգորիայի օբյեկտների Նախագծերի համար,

II կատեգորիայի օբյեկտների Նախագծերի համար, որոնց փորձաքննությունը կարող է փոխարինվել Նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուի **գրավոր երաշխավորագրով**, եթե նման պայման նախատեսված է կապալի պայմանագրով:

III կատեգորիայի օբյեկտների Նախագծերի համար իրականացվում է **պարզ փորձաքննություն**:

IV կատեգորիայի օբյեկտների Նախագծերի համար իրականացվում է **պետական համալիր փորձաքննություն**:

V կատեգորիայի օբյեկտների Նախագծերի համար իրականացվում է **հատուկ համալիր փորձաքննություն՝ ՀՀ կառավարության որոշմամբ**:

**ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**  
**V կատեգորիայի օբյեկտների**

**Հատուկ համալիր փորձաքննություն**



**V կատեգորիայի օբյեկտների Նախագծերի համար**

Յուրաքանչյուր առանձին դեպքում տվյալ օբյեկտի փորձաքննությունն անցկացնում է ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովը, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**Իրավասու մարմնի կողմից շինարարության (քանդման) թույլտվության տրամադրում/  
Նախագծի համաձայնեցում**

**II կատեգորիա**

**5 օրյա  
ժամկետ**

**III կատեգորիա**

**10 օրյա  
ժամկետ**

**IV կատեգորիա**

**15 օրյա  
ժամկետ**

**Քանդման (ապամոնտաժման) թույլտվությունն իրավասու մարմնի կողմից տրամադրվում կամ մերժվում է քանդման թույլտվություն ստանալու համար կառուցապատողի դիմումն ստանալու օրվանից՝**

**II կատեգորիա**

**5 օրյա  
ժամկետ**

**III կատեգորիա**

**10 օրյա  
ժամկետ**

**IV կատեգորիա**

**15 օրյա  
ժամկետ**

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**Իրավասու մարմինը**

**3 օրյա  
ժամկետ**

**Շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) թույլտվության պատճենները ներկայացնում է.**

- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային տեսչական մարմին
- ՀՀ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն
- Իրավասու մարմինը տրամադրած թույլտվության մասին նույն ժամկետում իրազեկում է նաև ՀՀ համապատասխան մարզպետներին

4.

**Դասախոսություն 4 (40 րոպե)**  
**ՀՀ կառավարության 2015 թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ  
ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ**

**Ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) տալիս է համայնքի ղեկավարը**

Ավարտական ակտը՝ հիմք է ավարտված օբյեկտի և դրա կազմում առանձնացված միավորների նկատմամբ իրավունքների գրանցման համար

Ավարտված օբյեկտի համապատասխանությունը Նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին հավաստվում է ընդունող հանձնաժողովի ակտով (ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման N5 հավելվածի N3-2-1 ձև) և հիմնավորվում կատարողական փաստաթղթերով կամ օբյեկտի տեխնիկական վիճակի մասին դրական եզրակացություններով:

Կատարողական փաստաթղթերի փաթեթը կազմում է կապալառուն՝ տեխնիկական հսկողություն կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

Ընդունող հանձնաժողովը ձևավորում և ղեկավարում է կառուցապատողը,

Ընդունող հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է կառուցապատողի հաշվին:

## **Ընդունող հանձնաժողովի կազմում ներգրավվում են**

- կառուցապատողի,
- կապալառուի,
- տեխնիկական հսկողություն
- օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն իրականացնող անձինք,
- քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային բաժնի,
- մատակարար կազմակերպությունների,
- լիցենզավորված չափագրողի
- ինչպես նաև օրենքով համապատասխան վերահսկողական իրավասություններով օժտված այլ շահագրգիռ պետական մարմինների և իրավասու մարմնի ներկայացուցիչները:

**9. Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

**ԷԿԿԱՆ ՈՉ ԷԿԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ**

171.3. Սույն կարգի 171-րդ կետի իմաստով ոչ էական շեղումներ են համարվում՝

1) յուրաքանչյուր հարկի՝ արտաքին չափերով հաշվարկված մակերեսի սահմաններում մինչև 5 տոկոսի չափով շեղումը, եթե շեղումը չի խաթարում մյուս հարկերի շահագործման անվտանգությունը և հաստատված նախագծով առաջադրված ճարտարապետական ծավալատարածական կերպարը.

2) շենքի կամ շինության հատակից հատակ բարձրության՝ մինչև 4 տոկոսի չափով (յուրաքանչյուր հարկի համար) շեղումը, շենքի ողջ բարձրությամբ մինչև 1.2 մետր չափով չգերազանցելու պայմանով.

3) ներքին միջնորմների և այլ ոչ կառուցվածքային տարրերի տեղադիրքի շեղումները՝ սենքերի՝ նորմերով պահանջվող նվազագույն հարաչափերի պահպանման պայմանով.

4) սեփական տնամերձ հողամասում օբյեկտի (շենքի կամ շինության) տեղադիրքի շեղումը հողամասի սահմանագծից՝ նախագծով նախատեսված հեռավորության 10 տոկոսից ոչ ավելին, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական նորմերով նախատեսված պահանջներին.

5) հողամասում բնակելի, հասարակական, արտադրական նշանակության օբյեկտների (շենքի կամ շինության) տեղադիրքի շեղումը հողամասի սահմանագծից՝ նախագծով նախատեսված հեռավորության 5 տոկոսից ոչ ավելին՝ 1.5 մետրը չգերազանցելու դեպքում, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական նորմերով նախատեսված պահանջներին.

6) ոչ կրող պատերում (այդ թվում՝ արտաքին) նախագծով նախատեսված դռների և պատուհանների տեղադրության և չափերի անհամապատասխանությունը՝ մինչև 10 տոկոս մակերեսի չափով՝ քաղաքաշինական և սանիտարական նորմերին և շենքի կամ շինության ճարտարապետական կերպարին չհակասելու պայմանով, և առկա է սույն կարգի 171.2-րդ կետով սահմանված պահանջը.

7) օբյեկտի ոչ գլխավոր ճակատային մասում ոչ կրող պատերում (այդ թվում՝ արտաքին) նախագծով չնախատեսված՝ կառուցված դռները և պատուհանները՝ քաղաքաշինական և սանիտարական նորմերին և շենքի կամ շինության ճարտարապետական կերպարին չհակասելու պայմանով, և առկա է սույն կարգի 171.2-րդ կետով սահմանված պահանջը.

8) սեփական հողամասում (կախված հողամասի առանձնահատկություններից (օրինակ՝ ռելիեֆ) նախագծով նախատեսված աստիճանների կամ հարթակների շեղումները կամ դրանց առկայությունը նախագծով չնախատեսված տեղերում՝ քաղաքաշինական նորմերին և շենքի կամ շինության ճարտարապետական կերպարին չհակասելու պայմանով.

9) 300 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփական տնամերձ հողամասում կառուցվող անհատական բնակելի տների (առանձնատների, մենատների) և դրանց օժանդակ նշանակության կառույցների ոչ կրող, կրող և կոշտության (դիաֆրագմաներ) պատերում (այդ թվում՝ արտաքին) նախագծով նախատեսված դռների և պատուհանների տեղադրության և չափերի անհամապատասխանությունը՝ մինչև 20 տոկոս մակերեսի չափով, եթե չի հակասում հակահրդեհային, ինսուլյացիայի, լուսավորության և պատուհանից պատուհան դիտելիության վերաբերյալ գործող նորմատիվ պահանջներին.

10) 300 քառ. մետր ընդհանուր մակերեսը գերազանցող՝ ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփական տնամերձ հողամասում կառուցվող անհատական բնակելի տների (առանձնատների, մենատների) և դրանց օժանդակ նշանակության կառույցների ոչ կրող, կրող և կոշտության (դիաֆրագմաներ) պատերում (այդ թվում՝ արտաքին), վերոնշյալ տարրերի (դռներ, պատուհաններ, բացվածքներ) տեղադրության և չափերի անհամապատասխանությունը՝ մինչև 20 տոկոս մակերեսի չափով, եթե ապահովված են ի լրումն հակահրդեհային, ինսուլյացիայի, լուսավորության և պատուհանից պատուհան դիտելիության նորմերի, ինչպես նաև պատերի նվազագույն չափերի, բացվածքների

9. **Դասախոսություն 9**  
**ՀՀ կառավարության 2015**  
**թվականի**  
**մարտի 19-ի N 596-Ն որոշում**

171.4. Սույն կարգի 171.3-րդ կետով սահմանված շեղումները ոչ էական են համարվում հետևյալ պահանջների ապահովման պայմանով՝

1) չեն փոփոխվել հաստատված նախագծային փաստաթղթերով նախատեսված՝

ա. օբյեկտի հարկայնությունը,

բ. օբյեկտի տեղադրման կարմիր և կառուցապատման գծերը,

գ. կառուցապատվող հողամասի սահմանները.

2) օբյեկտի կոնստրուկտիվ տարրերին չառնչվող ճարտարապետական արտահայտչամիջոցների (ճակատների, բարձրաքանդակների, ինտերիերի նկարվածք և այլն, եթե այդ շեղումները չեն հակասում քաղաքաշինական կանոնադրության պահանջներին) փոփոխման դեպքում առկա են նախագծող հեղինակի (ճարտարապետ, կոնստրուկտոր) գրավոր համաձայնությունն ու նախագծում համապատասխան փոփոխությունը:

172. Օբյեկտը համարվում է էական շեղումներով կառուցված, եթե այդ շեղումները չեն համապատասխանում սույն կարգի 171.2-րդ, 171.3-րդ և 171.4-րդ կետերով սահմանված պայմաններին:

172.1. Էական շեղումներով կառուցված օբյեկտների դեպքում շինարարությունն ընդունող հանձնաժողովի դրական եզրակացություն (ընդունող հանձնաժողովի ակտ) չի տրամադրվում, փոխարենը՝ շինարարությունն ընդունող հանձնաժողովի ձևավորումից հետո սույն կարգի 154-րդ կետով սահմանված ժամկետներում կառուցապատողին է տրամադրվում էական շեղումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունը՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու և փաստագրված էական շեղումները վերացնելու համար:

172.2. Կառուցապատողը կարող է նորից դիմել շինարարությունն ընդունող հանձնաժողովին՝ հանձնաժողովի դրական եզրակացությունը (ընդունող հանձնաժողովի ակտ) ստանալու նպատակով միայն մեկ անգամ նշված էական շեղումները վերացնելուց հետո՝ ոչ ուշ, քան էական շեղումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունն ստանալուց հետո՝ շինարարության թույլտվության ժամկետում, բայց ոչ ավելի, քան վեց ամսվա ընթացքում: Շինարարության թույլտվության ժամկետը կարող է երկարաձգվել միայն մեկ անգամ՝ 3 ամիս ժամկետով:

172.3. Էական շեղումների շտկման համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո 3 ամսվա ընթացքում դիմելու դեպքում կառուցապատողը պարտավոր է շինարարությունն ընդունող հանձնաժողովին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) էական շեղումների շտկումից հետո կառուցված օբյեկտի փաստագրված նախագծային փաստաթղթերի սահմանված կարգով կրկնակի փորձաքննություն, այդ թվում՝ միջին դիսկալնության օբյեկտների համար նախատեսելով պարզ փորձաքննություն ևս.

2) էական շեղումների շտկումից հետո կառուցված օբյեկտի վերաբերյալ լիցենզավորված մասնագետի կողմից տրված սեյսմիկ եզրակացություն.

3) էական շեղումների շտկման աշխատանքների վերաբերյալ արտոնագրված ճարտարապետի և ճարտարագետ-կոնստրուկտորի կողմից տրված մասնագիտական եզրակացություն առ այն, որ հանձնաժողովի կողմից եզրակացությանը ներկայացված էական շեղումները շտկվել են, և կառուցված օբյեկտը համապատասխանում է հաստատված նախագծային փաստաթղթերին և գործող նորմատիվատեխնիկական պահանջներին:

172.4. Էական շեղումների շտկման համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո, հանձնաժողովի դրական եզրակացությունը (ընդունող հանձնաժողովի ակտ) չկազմվելու դեպքում համայնքի ղեկավարը դիմում է Կադաստրի կոմիտեին՝ կառուցված շինությունը որպես ինքնակամ հաշվառելու նպատակով:

172.5. Էական շեղումների շտկման պատասխանատվությունը կրում է կառուցապատողը:

**ԷԿԿԱՆ ՈՉ ԷԿԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ**

The background features a complex geometric pattern of intersecting lines forming a grid, which is partially obscured by a horizontal line. The pattern is rendered in shades of gray and black, creating a sense of depth and perspective. The text is positioned in the lower right quadrant of the image.

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՈՒՆ**